հրդակցօք քով, և զօրագլուխ զինուորօք քով պահպանել աշխարհն արարատեան ընդ Օրինօքն հայաստանեաց, և տուաք իշխանութիւն քեզ 'ի վերայ վիճակին աշխարհին յերևանու գործել ամենայն բարիս որպէս գլուխ 62. յօրէնս մեր և չար ոչ մի, և լինիլ պատրաստ պատասխանելոյ դու վասն ամենայն գործոց ձեռաց քոց, և տուաք իշխանութիւն քեզ 'ի բերմանէ վիճակի քոյ ստանալ գանձարանէ քաղաքին յերևանու հատուցանել ռոճիկս պաշտօնատարաց տանն հայոց տալով 'ի նմայ ըռսիտ, և նոյն ըռսիտն համարեսցի առաջի ատենի տանուտերաց իբր դրրամս, տուաք հրաման քեզ զի ամենայն շաբաթի յղեսցես քարտէզն քոյ ամենայն լրիւ աշխարհէ վիճակէ քումէ ազգ առնելով զամենայն զոր ինչ առաջի ատենի տանուտերաց հայոց և թուաբանութիւն աշխարհազրութեան զինուորաց վիճակին յերևանու հանդերձ թվաւ ննջեցելոց, համարն եկամտից և ծախից և այլն, որ կատարելապէս ընծայեսցես առ դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց ձեռամբ փոխանորդի քոյ, ամենայն տարւոջ յամսեանն յունվարի մին թուէն տուաք իշխանութիւն քեզ զի պահեսցես վարպետ զինուորութեան և ամենայն կարգադրութեան, և հրամայեմք քեզ կալ և մնալով հաստատուն 'ի վերայ ամենայն Օրինաց հայոց, յատկապէս 'ի գլուխ 101 երրորդ Օրէնս, զի կըր-